Եվրոպական ներդրումային բանկը Հայաստանում

European Investment Bank

The EU bank

Վազիլ Հուդակ

Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահ

«Վերջին 10 տարվա ընթացքում, ԵՆԲ-ն և ԵՄ-ն հայերի հետ միասին աշխատել են՝ ստեղծելու մի հասարակություն, որը բարգավաճում է, ներդրում կատարելով այնպիսի ծրագրերում, որոնք ստեղծում են հնարավորություններ և մարդկանց տալիս կյանքի ավելի լավ որակ: ԵՆԲ-ն իր ծրագրերի միջոցով օգնում է բարելավել մարդկանց առօրյա կյանքը՝ ստեղծելով նոր ճանապարհներ, տաք մանկապարտեզներ, մաքուր և անվտանգ ջուր: Բացի այդ մենք աջակցել ենք բիզնես հնարավորությունների, նոր աշխատատեղերի և ավելի լավ կրթական հաստատությունների ստեղծմանը: Մեր հանձնառությունն ուժեղ է քան երբևէ, և մենք կշարունակենք Հայաստանում արդյունքներ ստանալ:»

Պյոտր Անտոնի Սվիտալսկի

Հայաստանում ԵՄ դեսպան, Եվրոպական միության պատվիրակության ղեկավար

«Եվրոպական միությունը և Եվրոպական ներդրումային բանկը գործընկերներ են, որոնք աշխատում են Հայաստանի քաղաքացիների հետ: ԵՄ-ն լիազորություններ է տալիս և դրա ֆինանսական միջոցներն աջակցում են ԵՆԲ-ի ծրագրերին: Միասին մենք նպատակ ունենք ավելացնել Հայաստանի մրցունակությունը, որն էլ իր հերթին ստեղծում է այդքան անհրաժեշտ աշխատատեղերը և խթանում է տնտեսական աճը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ

2008 թվականից սկսած ընդհանուր վարկավորումը կազմում է **379 միլիոն եվրո**

Հայաստանի Հանրապետությունը փոքր, բնակչության ցածրից-միջին եկամտով երկիր է, գնողունակության առումով գրեթե 9500 ԱՄՆ դոլար մեկ շնչի ՀՆԱ-ով և շուրջ երեք միլիոն ընդհանուր բնակչությամբ: Փոքրամասշտաբ հողագործությունը խթանում է Հայաստանի տնտեսությանը: Գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի շուրջ 15%-ը, չնայած այս բաժինը նվազում է: Շարունակական կառուցվածքային բարեփոխումները էականորեն բարելավել են մրցունակությունը և բիզնես միջավայրը, որն այժմ հավասարվում է Եվրասիայի միջին ցուցանիշներին: Դրամական փոխանցումներից և ապրանքների՝ հիմնականում հանքանյութերի և մետաղների արտահանումներից երկրի կախվածությունը հանգեցնում է նրան, որ երկիրը կրում է միջազգային գների ոլորտում արտաքին ցնցումների և տատանումների ազդեցությունը: 2014 թվականից սկսած ավելի ցածր ապրանքների գները և ավելի խիստ վարկային պայմանները ցած են մղել ներքին պահանջարկը: Այս զարգացումները 2016 թվականին էականորեն ավելի ցածր աճի հանգեցրին, որն իջեցրեց հարկային եկամուտները և ավելացրեց պետական պարտքը: Արտահանումների ավելի մեծ պահանջարկը և ավելի դինամիկ մասնավոր հատվածը, ամեն դեպքում, վերջին տարիներին խթանեցին աճը: Այդ տեմպն ակնկալվում է, որ պետք է ինչ-որ առումով թուլանա 2019 թվականին:

Վերջին հինգ տարվա ընթացքում մենք օգնել ենք՝

Կառուցել 180 կիլոմետր ճանապարհ

Տրամադրել անվտանգ խմելու ջուր 8600 մարդու համար

Բարելավել ենք կոյուղու ծառայությունները 20000 մարդու համար

Գյուղատնտեսությունը գերիշխում է տնտեսությանը, սակայն դրա բաժինը կրճատվում է ...



Աղբյուր՝ Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները, 2018 թվականի հոկտեմբեր

Աճը նորմալանում է ...



* ԱՄՀ-ի հաշվարկ հիմնադրամ, ՀամաշխարհայիԱղբյուր՝ Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները, 2018 թվականի հոկտեմբեր

Բիզնեսի իրականացումը ավելի հեշտացել է, սակայն դեռ կան մարտահրավերներ



Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, Գործարարություն 2019

ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Հանրային ենթակառուցվածքը ԵՆԲ-ի վարկավորման ամենակարևոր ոլորտն է Հայաստանում: ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորված ծրագրերը բարելավում են Հայաստանի կապերը համաշխարհային տնտեսության հետ, օգնում են ստեղծել պայմաններ, որոնք անհրաժեշտ են աճի և կայունության համար: ԵՆԲ-ի վարկերը թույլ են տալիս տեղական կառավարություններին ներդրումներ կատարել՝ բարելավելով քաղաքացիների առօրյա կյանքը:

Ամբողջ երկրով մեկ ԵՆԲ-ն օգնում է Հայաստանին վերազինել ջրային և ջրահեռացման ենթակառուցվածքը, ճանապարհները և էներգիայի հաղորդումը: Մայրաքաղաք Երևանում, որտեղ Հայաստանի բնակչության մեկ երրորդն է ապրում, ԵՆԲ-ն աջակցել է ծրագրերի, որոնք վերանորոգել են մետրոպոլիտենը, մանկապարտեզները և բարելավել է կոշտ թափոնների կառավարումը:

Հայաստանը ցամաքով շրջապատված է և սահմանակից է Իրանին, Վրաստանին, Թուրքիային և Ադրբեջանին: Սակայն այս սահմաններից երկուսը՝ Վրաստանը և Իրանը բաց են, որը սահմանափակում է երկրի մուտքը տարածաշրջան: Քանի որ Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է առևտրից, դեպի Վրաստան և Իրան հիմնական տարանցիկ ճանապարհների վերանորոգումը կենսական կարևորություն ունի երկրի՝ տարածաշրջանի մնացած մասի հետ ինտեգրման համար: Այդ նպատակով ԵՆԲ-ն ֆինանսավորում է ծրագրեր, որոնք աջակցում են ծախսաարդյունավետ, բնապահպանորեն համատեղելի և սոցիալապես կայուն տրանսպորտային ենթակառուցվածքին և ծառայություններին: Մինչ այսօր ԵՆԲ-ն 142 միլիոն եվրոյի վարկ է տրամադրել երեք տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագրերի համար (տե՛ս դեպքերի ուսումնասիրությունների հատվածը):

«ԵՆԲ-ի ֆինանսավորած ծրագրերը բարելավում են Հայաստանը»:

Լրումն տրանսպորտային ենթակառուցվածքի, ԵՆԲ-ն նաև աջակցում է մի շարք ծրագրերի, որոնք բարելավում են ենթակառուցվածքը կամ գործ ունեն կլիմայի փոփոխության հետևանքների հետ: Մի օրինակ է Երևանի էներգաարդյունավետության ծրագիրը, որն Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերության միջոցով ստացել է 5 միլիոն եվրոյի դրամաշնորհ: Գործընկերությունը, որը նաև հայտնի է որպես E5P, էներգաարդյունավետության և բնապահպանական ծրագրերի համար ստանում է աջակցություն Եվրոպական միության և այլ դոնորների կողմից՝ Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում և Բելառուսում:

ԵՆԲ-Ն ՀԱՏԿԱՑՐԵԼ Է

214 միլիոն եվրո

Մոբիլիզացրել շուրջ

600 միլիոն եվրո

Պետական հատվածի

10 ծրագրի համար

ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Երեք նոր սահմանային անցակետ է բացվել 2017թ-ին, **որոնք ուժեղացնում են Հայաստանի կապը Վրաստանի** և աշխարհի մնացած մասի հետ: Ծրագիրը, որը ԵՆԲ-ից ստացել է **31 միլիոն եվրոյի** վարկ, բարելավում է համագործակցությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը երկու երկրների միջև տեղեկատվության ավտոմատ փոխանակման միջոցով: Այն նաև արդիականացնում է անցակետերի մաքսային ձևակերպումների համակարգերը: ԵՄ-ն ծրագրին աջակցել է Հարևանության ներդրումային հիմնադրամի (NIF) 12 միլիոն եվրո արժողությամբ դրամաշնորհի միջոցով:

Ներդրումների շնորհիվ անցակետերը դարձրել են ԵՄ-ի ստանդարտներին համապատասխան՝ **հեշտացնելով մարդկանց** և ապրանքների **տեղաշարժը** սահմանով: 2008թ-ին միջինը **28 օր էր տևում**, որպեսզի ապրանքները մուտք գործեին Հայաստան մաքսազերծման համար: Ծրագիրը նվազեցրել է այդ ժամանակը 5 օրով: Նոր համակարգը նաև կրճատում է միջին ժամանակը, որը խլում է ավտոմեքենայով ճանապարհորդող մարդկանց սահմանը հատելու գործընթացի համար մինչև 70%-ով՝ շուրջ 5 րոպեով: Որպես արդյունք երկու երկրների միջև առևտուրն ու ճամփորդությունն աճում է:

ԿԵՆՍԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

Մետաքսի ճանապարհի մի հատվածը արդիականացվում է: M6 միջպետական տարանցիկ երթուղին, որը կապում է Կենտրոնական Հայաստանը Վրաստանի հետ, վերանորոգվում է՝ շնորհիվ **51 միլիոն** եվրո արժողությամբ ԵՆԲ-ի վարկի: **90 կիլոմետրանոց երկու գոտի ունեցող ճանապարհը** կկապի Վանաձորը՝ Հայաստանի մեծությամբ երրորդ քաղաքը, երկրի հյուսիս-արևելքում գտնվող Վրաստանի սահմանին կից Բագրատաշենի հետ: Արդիականացումը կբարելավի **ճանապարհի անվտանգությունը**, որը կտրվում է իր խորը հովիտներով և հայտնի է իր ոլորապտույտներով, կտրուկ թեքություններով, նեղ կամուրջներով և թունելներով: M6 ճանապարհը կենսական միջանցք է Թբիլիսիի միջոցով հայկական ապրանքների Սև ծովի նավահանգիստներ տեղափոխման համար և ապա Եվրոպա կամ Կենտրոնական Ասիայի այլ երկրներ: ՀՆՀ-ի 5.15 միլիոն եվրոյի ԵՄ-ի դրամաշնորհը նույնպես կվճարի ծրագրի համար:

ԵՐԿՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՄԻ ԾԱՅՐԻՑ ՄՅՈՒՍԻՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ծրագիրը կբարելավի Հայաստանում շատ օգտագործվող տրանսպորտային երթուղու **556 կիլոմետրը**, որը սկսվում է Վրաստանի սահմանի մոտ գտնվող Բավրայից մինչև Մեղրի՝ Իրանի սահման՝ անցնելով Գյումրի, Աշտարակ, Երևան, Գորիս և Կապան քաղաքներով: Ծրագիրը, որը ԵՆԲ-ից ստացել է **60 միլիոն եվրոյի** վարկ, նաև ներգրավել է 12 միլիոն ՀՆՀ-ի դրամաշնորհ: ՀՆՀ-ի գումարի կեսը կվճարվի տեխնիկական աջակցության նպատակով: Նոր ճանապարհը կբարելավի կապը Հայաստանի գյուղերի և տարածաշրջանի մնացած մասի հետ՝ խթանելով սոցիալական և տնտեսական զարգացումը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ճաքված գաջե պատեր, թափվող ներկեր, անցքերով պատուհաններ և կաթացող տանիքներ՝ հայաստանյան մանկապարտեզներում խնդիրների ցանկը երկար է և որից ամենաշատը տուժում են երեխաները: «**Երեխաների առողջությունը և անվտանգությունը առաջնային է**», ասում է Արմինե Հայրապետյանը՝ Երևանյան մանկապարտեզներից մեկի տնօրենը:

Մանկապարտեզները Հայաստանի մայրաքաղաքում տարիներ շարունակ քայքայվել են: «Պարզապես մեր դռների և պատուհանների վերանորոգումը ծայրահեղ կարևոր է, քանի որ երեխաները ավելի շատ հակում ունեն հիվանդանալու», ասում է Անուշ Դավթյանը, Երևանի դպրոցական թաղամասում մանկապարտեզ հաճախող երեխայի ծնող:

Երևանի Էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում մոտ **150 մանկապարտեզ** կվերանորոգվի մինչև 2020թ-ը: Աշխատանքները կուժեղացնեն շինությունների սեյսմիկ վիճակը և կբարելավեն էներգաարդյունավետությունը մի կլիմայում, որը հայտնի է ջերմաստիճանի մեծ տատանումների համար ամռանից մինչև ձմեռ: Ճաքճքած պատերը կշտկվեն, տանիքները կմեկուսացվեն և նոր տաքացուցիչներ կտեղադրվեն: LED լուսավորության և արևային էներգահամակարգերը կկրճատեն էներգիայի սպառումը:

Դա հնարավոր կլինի իրականացնել E5P-ի **5 միլիոն** եվրո արժողությամբ դրամաշնորհի շրջանակում: Երևանյան մանկապարտեզների ծրագիրը կնվազեցնի ածխածնի երկօքսիդի արտանետումները տարեկան մինչև 5 502 տոննայով և կբարելավի **34 500 երեխաների, ուսուցիչների և անձնակազմի անդամների** կյանքը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ

Մաքուր ջրին, սանիտարական և անվտանգ աղբահանության հնարավորություն ունեցող մարդիկ հաճախ այդ ծառայություններն ընդունում են, որ այդպես էլ պետք է լիներ: Հավաստիանալով, որ ամբողջ բնակչության համար այն առկա է, ամեն դեպքում, դա պահանջում է կանոնավոր տեխնիկական սպասարկում և ներդրում:

Այդ նպատակով ԵՆԲ-ն տրամադրում է **38 միլիոն** եվրո՝ ֆինանսավորելու ներդրումները ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններում: Ֆինանսավորում ստացած ծրագրերից մեկը՝ Ջրային հատվածի կոմունալ ենթակառուցվածքների ծրագիրը, իրականացվում է գերմանական զարգացման բանկի՝ KfW-ի հետ համատեղ: ԵՄ-ն նաև ՀՆՀ-ի դրամաշնորհների միջոցով աջակցում է **ջրային հատվածին վերաբերող ծրագրերին:**

Բացի ջրային հատվածին վերաբերող ծրագրերից, Բանկը նաև աջակցում է Հայաստանի մայրաքաղաք Երևանին և հարակից շրջաններին՝ կառուցելով նոր, ավելի մաքուր աղբավայրեր: ԵՆԲ-ն տրամադրում է **8 միլիոն եվրոյի** վարկ և ԵՄ-ն աջակցում է 2 միլիոն եվրո գումարով E5P-ի դրամաշնորհի միջոցով և 500 000 եվրո՝ Քաղաքային ծրագրի աջակցության հիմնադրամի միջոցով (ՔԾԱՀ): Ծրագիրը կկրճատի գազերը, որոնք արտանետվում են թափոնների քայքայմամբ, ներառյալ ածխածնի արտանետումները:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոքր բիզնեսները Հայաստանում տնտեսության աճի, աշխատատեղերի ստեղծման և նորարարության հիմնական շարժիչ ուժն են՝ ներկայացնելով բոլոր գրանցված ընկերությունների մոտ 98%-ը: Միկրո ձեռնարկությունները, որոնք ունեն 10-ից քիչ աշխատակից, կազմում են այս ընկերությունների 89%-ը և փոքր բիզնեսների շուրջ 6%-ը: [1]

ԵՆԲ-ն աջակցում է այս բիզնեսների զարգացմանը վարկային գծերի միջոցով, որոնք նախատեսված են հասցեավորելու երկարաժամկետ ֆինանսավորման սակավությունը: Ի լրումն, ԵՆԲ-ի ֆինանսական գործընկերների համար վարկերի շահավետ պայմանները բարելավում են վարկի ընդհանուր հասանելիությունը:

2014թ-ից ԵՆԲ-ն վարկեր է տրամադրել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին, որն իր հերթին օգտագործում է միջոցները՝ աջակցելու փոքր բիզնեսներին և բարելավելու պետական հատվածի ֆինանսավորման հասանելիությունը: 2018 թվականին ԵՆԲ-ն ստորագրեց 50 միլիոն եվրո արժողությամբ մասնավոր հատածին տրամադրվող հնարավորության վերաբերյալ փաստաթուղթ Հայաստանի Կենտրոնական բանկի հետ՝ աջակցելով ծրագրերին, որոնք նպատակաուղղված են փոքր բիզնեսներին՝ EU4Business նախաձեռնության հետ համատեղ: Միջոցների մեծ մասնաբաժինը կտրամադրվի գյուղական վայրերի գյուղատնտեսական ապրանքների վերամշակման և զբոսաշրջության ծրագրերին, որոնք տնտեսական գործունեության կարևոր ոլորտներ են: Գյուղատնտեսությունը շարունակում է գերակայել հայաստանյան տնտեսությունում: 2017 թվականին այն ներկայացնում էր ՀՆԱ-ի գրեթե 15%-ը և աշխատատեղ էր ապահովում աշխատող բնակչության մոտ 37%-ի համար: [2]

ԵՆԲ-Ն ՏՐԱՄԱԴՐԵԼ Է

շուրջ
165 միլիոն եվրո
ՓՄՁ-ի ֆինանսավորման համար

Մոբիլիզացնելով շուրջ
205 միլիոն եվրո

Ավելի քան
530 ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիաների համար

Փոքր բիզնեսի վարկավորման բաշխվածությունը



1 OECD, «Հայաստանում ՓՄՁ-ի քաղաքականության բարեփոխումներ», 2017 թվականի դեկտեմբեր:

2 Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն:

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Ալպինա հյուրանոցը գտնվում է Ծաղկաձորի սրտում՝ սպա քաղաք և հանգստյան գոտի, որը տեղակայված է Թեղենիս լեռան արևելյան լանջին: Հանգստյան գոտին, լինելով ամենամոտը Երևանին, այն դարձնում է մեծ մասսայականություն վայելող զբոսաշրջային ուղղություն:

Հիմնադրվելով 2004 թվականին, Ալպինա հյուրանոցը բաղկացած է 24 հարմարավետ սենյակներից և տաս քոթեջներից, որոնցից երկուսը լյուքս համարներ են: Այն ունի կոնֆերանս դահլիճ, ռեստորան, երկու բառ, սպա կենտրոն և երեխաների խաղահրապարակ: ԵՆԲ-ի օգնությամբ հյուրանոցը կարողացավ երաշխավորել **180 000 եվրոյի վարկ** յոթ տարի մարման ժամկետով՝ նպատակ ունենալով վերանորոգել շինությունը և գնել միկրոավտոբուս հյուրերի համար: Արդիականացումը օգնեց հյուրանոցին, **որն ունի 35 աշխատակից**, մեկ տարվա ընթացքում ավելացնելով իր հյուրերի թիվը մինչև 20%-ով:

ԱՎԵԼԻ ՄԵԾ ԵՎ ԱՎԵԼԻ ԿԱՆԱՉ

Չանախը կաթ վերամշակող ընկերություն է, որն ունի **65 աշխատակից**, Զովք գյուղի շրջակայքում աջակցում է տեղական ֆերմերներին իր վերջնական պատրաստի ապրանքների վաճառքների միջոցով, օրինակ՝ պաստերացված կաթ, խմորված կեֆիր և ըմպելի յոգուրտներ: Ընկերությունը, տեղակայված լինելով մայրաքաղաք Երևանից դուրս մոտ 15 կիլոմետր հեռավորության վրա, աճել է փոքր ձեռնարկությունից դառնալով միջին ձեռնարկություն և այժմ դանդաղորեն ավտոմատացնում է իր արտադրությունը: ԵՆԲ-ի կողմից տրված ֆինանսավորումը հնարավորություն կտա Չանախին փոխարինել **իր պլաստմասե շշալցման սարքավորումները** լիովին ավտոմատացված համակարգի հետ, որն ի վիճակի է լիցքավորել Pure-Pak տարաներով: Այս ներդրումը ոչ միայն ընկերության երեք հիմնական արտադրանքները կդարձնի ավելի մրցունակ, այլ այն նաև Չանախի փաթեթավորումը **էկոլոգիապես** ավելի մաքուր կդարձնի:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Վենսեվանը ընտանեկան բիզնես է, որն աշխատել է շուրջ չորս սերունդ, արտադրում է գինիներ Արարատյան դաշտավայրում, յուրահատուկ միկրոկլիմա և արտակարգ միջավայր ունեցող մի վայր, որը **6000 տարի շարունակ գրավել է գինեգործներին:**

Մինչև 2016 թվականը Վենսեվանը պահում և հասունացնում էր գինիները, որոնք արտադրվում էին իր 18 հեկտար տարածքում, բացառապես կաղնու տակառներում: ԵՆԲ-ի տրամադրած վարկը թույլ տվեց գինեգործին ընդլայնել թե՛ պահեստավորման, և թե՛ հասունացման առկա կառույցները և չորս նոր բաքերի միջոցով **էականորեն ավելացնելով իր արտադրությունը:** Վենսեվանը նաև գումարն օգտագործել էր գնելու նոր լցավորման համակարգ և պիտակավորման մեքենաներ, ինչպես նաև ընդհանուր աշխատանքային կապիտալ:

Արդյունքում ընկերությունը կարողացավ ընդլայնել արտադրությունը՝ շարունակելով համապատասխանել արտահանման համար անհրաժեշտ **միջազգային ստանդարտներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի իր վարկավորման գործունեությունից, ԵՆԲ-ն իր հայ գործընկերներին աջակցում է ծրագրի շրջափուլերի միջոցով: Մեր խորհրդատվական ծառայությունները նպաստում են բանկի լայն փորձին և փորձառությանը՝ շահառուներին ուղեկցելով ծրագրի նախագծման և իրականացման փուլերով: Մենք նաև փորձում ենք համատեղել մեր սեփական վարկավորումը և տեխնիկական աջակցությունը ԵՄ-ի այլ ծրագրերի միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերությունը (E5P)

հիմնադրվել է 2009 թվականին: Նախաձեռնությունը նպատակ ունի նվազեցնել ածխածնի և ջերմոցային գազերի այլ արտանետումները՝ ֆինանսավորելով ծրագրեր, որոնք խթանում են էներգաարդյունավետությունը կամ սահմանափակում են ռեսուրսների վատնումը, օրինակ՝ ջրի: Նախաձեռնությունը սկսվել էր Ուկրաինայում, սակայն տարածվել էր ընդգրկելով Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան, և այժմ պատրաստվում է սկսել գործողություններ Ադրբեջանում և Բելառուսում: E5P-ն 7 միլիոն եվրո դրամաշնորհ է տրամադրել՝ Հայաստանում աջակցելով ԵՆԲ-ի ֆինանսավորված ծրագրերին:

Արևելյան գործընկերության տեխնիկական աջակցության թրասթ հիմ նադրամը (EPTATF)

հիմնադրվել է 2010թ-ին, հիմնադրամը ծրագրային աջակցություն է տրամադրում Արևելյան գործընկերության երկրներին՝ ներառելով Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: Հիմնադրամը այս ընթացքում տրամադրել է 30.4 միլիոն եվրո՝ ֆինանսավորելով 25 ծրագիր, որից 2.2 միլիոն եվրոն Հայաստանին էր հատկացվել:

EU4Business

Այս միավորող խումբն ընդգրկում է ԵՄ-ի բոլոր գործողությունները, որոնք աջակցում են փոքր բիզնեսներին Արևելյան գործընկերության երկրներում, ներառյալ Հայաստանը: Ծրագիրը հաղթահարում է խոչընդոտները, որոնք կանխարգելում են փոքր բիզնեսները աճելուց, ինչպես օրինակ՝ ֆինանսավորման հասանելիություն, ծանրաբեռնված օրենսդրություն և նոր շուկաներ մտնելու արգելքներ:

ԵՄ-ի նորարարների ֆինանսավորումը (Innovfin)

ԵՆԲ-ի խմբի համատեղ նախաձեռնություն է (ԵՆԲ և Եվրոպական ներդրումային հիմնադրամ) և Եվրոպական հանձնաժողովի հետազոտական և նորարարական ծրագիրը՝ Հորիզոն 2020-ը, Innovfin-ը տրամադրում է ԵՆԲ-ի ֆինանսական և խորհրդատվական ծառայությունները հետազոտական ծառայություններին պետական և մասնավոր հատվածներում: Որպես Հորիզոն 2020-ի կապակցված երկիր, Հայաստանն իրավասու է դիմել ֆինսավորումների համար:

Քաղաքային ծրագրի աջակցության կառույցը (MPSF)

հիմնադրվել է 2014 թվականին ԵՄ-ի 12 միլիոն եվրո արժողությամբ սկզբնական աջակցությամբ, կառույցը Արևելյան գործընկերության երկրներում տեխնիկական աջակցություն է տրամադրում քաղաքապետարաններին: Այս ընթացքում կառույցը տրամադրել է 750 000 եվրոյի տեխնիկական աջակցության դրամաշնորհ Երևանի քաղաքապետարանին էներգաարդյունավետության և ջրահեռացման ծրագրերի համար:

Հարևանության ներդրումային հարթակը (NIP)

նախկինում հայտնի էր որպես Հարևանության ներդրումային կառույց: NIP-ը համակցում է Եվրոպական միության դրամաշնորհները պետական և մասնավոր հատվածների այլ ռեսուրսների հետ, ինչպես օրինակ վարկեր կամ կապիտալ: Իր առաջնային նպատակն է աջակցել Կայուն զարգացման նպատակների ձեռքբերմանը: Մինչ օրս, NIP-ը ներդրումների և տեխնիկական աջակցության դրամաշնորհների համար տրամադրել է գրեթե 80 միլիոն եվրո արժողությամբ դրամաշնորհներ՝ Հայաստանում աջակցելով ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

ԵՆԲ-ն Եվրոպական միության բանկ է, որը պատկանում է ԵՄ անդամ երկրներին: 2018թ-ին ԵՆԲ խումբը ներդրումների համար տրամադրել է մոտավորապես **80 միլիարդ եվրո** Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Մենք աշխարհի **ամենամեծ բազմակողմանի վարկառուն և վարկատուն ենք հանդիսանում:**

European Investment Bank
The EU bank

Եվրոպական ներդրումային բանկ
98-100, Կոնռադ Ադենաուերի բուլվար
L-2950 Լյուքսեմբուրգ
+352 4379-1
www.eib.org

twitter.com/EIB
facebook.com/EuropeanInvestmentBank
youtube.com/EIBtheEUbank

Մացիեժ Ցզուրա
Հարավային Կովկասում ԵՆԲ-ի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար
1 Գ. Տաբիձեի փողոց, Ազատության հրապարակ
0105 Թբիլիսի
Վրաստան
+995 3220-06284
tbilisi@eib.org

Եվրոպական ներդրումային խորհրդատվական կենտրոն
eiah@eib.org

Դյուսան Օնդռեյիցկա
Մամուլի պատասխանատու
+352 4379-83334
d.ondrejicka@eib.org

© Եվրոպական ներդրումային բանկ, 04/2019 HY Images: © UNDP, Alpina Tsaghkadzor Hotel